

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան - քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Ազգային գաղափարախոսությունը կյանքի կոչելու, նրա հիմնադրություններին ու սկզբունքներին հասարակության լայն խավերին ակամաջալուր դարձնելու մեջ մեծ է ազգային պետական քաղաքականության դերը: Իսկ պետականության բացակայությունը, կամ երբեմն խոշոր կայսրությունների կազմի մեջ մտնող ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի համար, որը կերտեց իր նորանկախ պետականությունը, ալե՛լի է մեծանում ազգային ինքնագիտակցության, արժանապատվության սերմանումը, որը ծանրանում է հանրակրթական հաստատությունների ուսերին:

Պատմական խճճված անցքերը, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը, հրամայում են այսօր ունենալ համազգային կրթական համակարգ և մատաղ սերնդին տալ ազգային՝ ոգով դաստիարակություն: Դպրոցում պետք է մեծ ուշադրություն դարձվի հայրենագիտական առարկաների դասավանդման հիմնախնդիրներին՝ այդ առարկաների դասավանդումը սերտորեն առնչելով հայ ժողովրդի պատմական հիշողության հետ: Իգուր չէ, որ մեծ գաղափարախոս Գարեգին Նժդեհը նշել է, թե դպրոցը պետք է լինի հայրենագիտության ամբիոն, տաճար, ուր մանուկը պիտի ծանաչի և սովորի սիրել հայ ժողովրդին ու երկիրը, նա է, որ հայ մանուկի մեջ պիտի քամի մեր պատմության բուխանդակ գեղեցկությունն ու վեհությունը: Մատաղ սերունդը ծանաչելով պատմությունը, ամրագրելով ազգային գաղափարներ՝ ցանկացած պահի պատրաստ է բռնկեցվելու և անկտրում ուժ դառնալու, ինչն էլ պետք է մեր ազգային պետության ռազմավարական անվտանգության հիմքում լինի:

*Անուշ Լալայան
«Ափսանություն» ՄԱԵԿ*

Լեզուն ազգապահպանման կարեւորագույն գործոն

Հաղորդակցությունն ազդում է մարդ արարածի ամբողջ էությանը: Խոսքային կարողությունները բազմաթիվ ձևերով ներգործում են յուրաքանչյուր անհատի զարգացման վրա: Որպես հասարակության ներկայացուցիչ յուրաքանչյուր անձնավորություն հարաբերվում է հասարակության լայն զանգվածների հետ և հաղորդակցվում այն լեզվով, որը հասկանալի է կողմերի համար: Ելնելով տնտեսական, հասարակական, սոցիալական և այլ պահանջներից՝ հանրության որոշ զանգվածներ պարտադրված են լինում կատարել

տեղաշարժեր, այնուհետև ընդունել այն լեզուն, որը համընդհանուր է տեղացիների համար: Հաճախ կորցնելով մայրենի լեզվով հաղորդակցվելու հնարավորությունը, մարդ ակամայից հեռանում է իր ինքնությունից և ժամանակի ընթացքում, հատկապես սերնդափոխությունից հետո, դադարում մտածել իր էությանն համահունչ: Խաթարված գիտակցությունը թելադրում է մտածողության նոր ձևեր: Շատերի համար այս ամենը կարող է խնդրահարույց չլինել (ոմանց համար հաղորդակցվելը զուտ փոխըմբռնման կամ մեկմեկու ընկալման գործընթաց է): Կարևոր չէ ինչ լեզվով: Իրոք լեզուն հասարակական հաղորդակցման միջոց է, սակայն դրանով չի սահմանափակվում լեզվի նշանակությունն ու դերը:

Պատահական չէ հարյուրավոր ազգերի գոյության և այդ լեզուներով հաղորդակցվող փաստը: Յուրաքանչյուր ազգ ունի իր լեզուն և պարտավորված է խոսել նրանով: Սա է իրողությունը, որը և նախասահմանված է ի վերուստ: Ուստի պատահականություն չէ լեզուների խառնակության աստվածաշնչյան տեսակետը: Եվ եթե հանրության լայն շրջանակների համար դա իրողություն չէ, ապա դա խոսում է միայն խաթարված գիտակցության մասին:

Այսպես, խորհրդային հասարակարգում ընդունելի և նորածն էր ռուսերենով հաղորդակցվելը: Սա նաև ժամանակի պահանջն էր, քանզի լինելով Ադրբեջանի տիրապետության տակ, կորցնում էինք ազգային ինքնագիտակցությունը, մյուս կողմից, եթե չունենայինք ռուսերենը, ապա ստիպված էինք ընդունել ադրբեջաներենը: Ուրեմն ռուսերենը նաև ոսկե միջինն էր, ադրբեջաներենից խուսափելու միջոց: Իհարկե, տասնամյակների հեռավորությունը բավական չէ ջնջելու ռուսամետության հետքերը: Եվ Ռուսաստանի հետ կապը մեծ լինելով շարունակվում է հանրության փոքր զանգվածների համար ռուսերենը հաղորդակցության միջոց ծառայելու գործընթացը:

Ներկայումս ռուսերենի կողքին հայտնվել են անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուները, որոնք այս կամ այն կերպով աղավաղում են լեզվի անաղարտությունը և ստիպում շատերին դառնալ օտարամուլ: Հարկ է նշել լեզուների իմացությունը խոսում է մարդու մեծ կարողությունների և հնարավորությունների մասին: Ողջունելի է, երբ ամձը ներկայումս տեղեկատվության և համաշխարհայնացման բուռն վերելքի ժամանակ, տիրապետում է մի քանի լեզուների, կարողանում է ծանոթանալ համաշխարհային մշակույթին

և գիտության նվաճումներին, սակայն դա գրոշի արժեք չունի, երբ հիմքը մայրենին չէ և չի ծառայում մայրենիին և միևնույն ժամանակ անոթալի, երբ չի տիրապետում մայրենիին:

Ամենարին է, ունենալ հայկական մտածելակերպ և մտածել ուրիշ լեզվով: Ասենք՝ Կիլյան Սարգյանը դեպքերի բերումով լինելով հայրենիքից հեռու ստեղծագործում էր անգլերենով, սակայն կրկին հայերեն մտածողությամբ, հայերեն ոգով: Շահան Շահնուրը ստեղծագործում էր և՛ հայերենով, և՛ ֆրանսերենով կրկին հայկական մտածողությամբ:

Եղեռնից հետո Սփյուռքում գործող հայկական համայնքները ուժ ու կարողություն չխնայեցին օտար հողում հայկական դպրոց ու եկեղեցի կառուցել, իրենց զավակներին հայերեն ուսում տալ:

Եվ այսօր, երբ մենք Եվրոպա մուտք գործելու նախաշեմին ենք, մեր խնդիրը ոչ թե հայերեն խոսելը, այլ հղկված հայերեն ունենալը պետք է լինի: Իհարկե, աշխարհում չկա մի լեզու, որ չհարստացնի իր բառապաշարը հարևան լեզուներից վերցրած փոխառություններով: Հայերենի բառապաշարի մասին բարձր կարծիք ունենալով հանդերձ, Մ. Սեբաստացին միաժամանակ հայտնում էր այն կարծիքը, թե ոչ մի լեզու չի կարող մաքուր, անկախ լինել, այն ազդում և ազդվում է: Այդ վիճակն ունի նաև հայերենը, որի թե խոսակցական, թե գրական լեզվի մեջ ներառվել են բազմաթիվ փոխառություններ՝ հին ու նոր, կենդանի ու մեռած:

Դեռևս ոչ հեռավոր անցյալում չունեինք «սкертмет», «саут», «сканер», «сотовый телефон», «принтер» հասկացությունները: Միայն տեխնիկայի զարգացմանը զուգահեռ դրանք սկսվեցին գործածվել: Ուրեմն հանրության տնտեսական-հասարակական պայքարի, փոխազդեցությունների, ներքին կյանքի ու զարգացման պատկերը կարելի է տեսնել տվյալ ժողովրդի լեզվի մեջ: Ամեն մի նոր նախ և առաջ դիտվում է որպես նորույթ: Այսպես և ցանկացած նորաբանություն անընդիատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում է բառապաշարի գործուն շերտը, և վաղ թե ուշ դադարում նորույթ լինելուց: Այսպես, հեռուստացույց, տիեզերանավ, ներդնել, երեսպատել, շարժաբեռ, որականիչ, խաղավար, հատույթ և բազմաթիվ այլ բառեր իրենց գործածության սկզբնական շրջանում նորաբանություններ էին, որոնք այժմ արդեն մեր գրական լեզվի ու նրա այս կամ այն

համակարգի գործուն շերտի բառեր են, ուստի և այն նորաբանություններ չեն:

Եթե լեզուն նոր է կազմավորված և նրա բառապաշարի օտարաբանությունները ճանաչելի են, ապա այդպիսի լեզվի վիճակը այնքան էլ նախանձելի չէ. երբեմն բառապաշարի մեջ սեփականը ճանաչելու շատ քիչ բան կարող է մնալ:

Ժամանակակից հայերենի բառապաշարի համալրման գործուն կարևոր նշանակություն ունի հատկապես հայերենի գոյության պատմական նախորդ շրջանների լեզուներից կատարված փոխառությունները: Այս տեսակետից գրական աշխարհաբարը պատկանում է աշխարհի բացառիկ լեզուների շարքին, այն առումով, որ անհրաժեշտության դեպքում կարող է փոխառություն կատարել գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախոսակցական լեզվից, բարբառներից, արևմտահայերենից: Վերցնենք գրաբարյան պարետ, ռունք, ական..., արևմտահայ ինքնաշարժ, հանրախանութ, աղջնակ, աղու «քաղցր», սառնաշաքար..., ժողովրդախոսակցական սրմուռ, մարմանդ, կռանալ..., բարբառային գետնանուշ, տհալ, չմուշկ, դահուկ, կոլոլակ...

Այսպիսով, փոխառությունները ամրանալով լեզվի մեջ, ոչ միայն հարստացնում են վերջինիս բառապաշարը, համալրում այն նոր հասկացություններով, այլև նորանոր բառերի կազմավորման հիմք են հանդիսանում:

Ազգային ինքնության և համազգային միասնականության ողջամտության պահպանման երաշխիքը անաղարտ լեզու ունենալն է: Լեզու լավագույնս կատարելագործված, արժանի բոլոր տեսակի սրցակցության: Միայն այս կերպ ազգը կարող է հարատևել և պահպանել իր ինքնությունը:

Գայանե Բարսեղյան

ԵՊԳ

Կրթական բարեփոխումներ. միջազգային ինտեգրման եւս մեկ քայլ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ կարողացել է պահպանել իր ինքնությունը և առաջ շարժվել ի շնորհիվ բազմադարյա մշակույթի ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
*Ստեփանակերտ, Վ.Սամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

